## 38. ԾԱՏՐԾՈՒՄԱՆ

Մեյ խա խարիսա ծախողմ կէլնի: Կասի. - Կյնիկ, աշկերտմ չլնի զի, բո՛շ ի:

Կասի. - Մա՛րթ, տյու կիտես. կուզես էրկու խա պռնի:

Խարիսա ծախողն էր, էլավ կոլոնմ ճիժ, գյեռ բառոժ կխաղան, մեկ ա̈դա̈բսըզ եթիմմ էտա ճժերաց յամանի պիրեր ի:

Էն մեյ տղեն ասաց. - Իմ ճան վո՞վ տարավ:

- Տե՛, գյեռ, հս կնա̈ցիր ի, զատ կայներ ի շունշան որթին:

Ասաց. - Ծա՛տրշուման, մեռնեմ քյե, իմ ճան տուր:

Ասաց. - Արե՛ տամ, արե՛ տամ, ես կիտի էնա մեկէլին ի:

Էտա խարիսա ծախողի աչկն էլ վեր էտա ճժերաց կէլնի:

Կասի. - Տղա՛ Ծատրշուման, Ծատրշուման, արե քյե պա̈ն ասեմ:

Ծատրշուման կնա̈ց մո խարիսա ծախող, ասաց. - Ծատրշումա՛ն. չե՞ս իգյա մո զի աշկերտ:

- Կուգյամ. - ասաց: - Աման ի՛նչ անեմ, պիտի ծեն չի տաս: Ես խարիսա շատ կուտեմ:

Խապլպեց, տարավ: Տարավ խանութ, բաշլային ինոնց խարիսա իփել: Խարիսեն ծախին, պրծան: Կուշտ ուր խարիսեն կերավ:

Ասաց. - Տղա՛, կերթա̈ս ծեր տու՞ն, թե կուգյա̈ս մեր տուն:

Ասաց. - Կուգյա̈մ ծեր տուն, իմ տեղ յու՞ստ ի տեղ, ես քյնեմ:

Էլա̈վ տարավ ուր տուն: Առատուն էլա̈ն էկան, չուր կեսօրին աշխատավ, կեսօրին փախավ, ուսթեն կնա̈ց լավա ինգյա̈վ, իպե:

Բաշլայեցին խարիսա ծախել: Պոծան, թողին կնա̈ցին տուն:

Առատուն էլ չկնա̈ց դյուքյան: Ասաց. - Էսա շանորթի քյեռո ծու՞ռ ի. հմեն օր կփախի:

Պառավ ասաց. - Էրթա̈մ մեյ կտոր խարիսա պիրեմ, ուտեմ: Էլա̈վ պառավ ուր ոսկի թաս առեց կնա̈ց, կնա̈ց խասավ դյուքյան:

Ասաց. - Ու՛սթա, ու՛սթա, մեյ կտոր էլ լից իմ թաս, էսօր տանեմ ուտեմ:

Էտա խարիսա ծախողն թասն առեց, իրիշկեց՝ ոսկի թաս, թասն պախեց. էն թասի գյոնից խարիսա ilից, իտուր պառվու ծեռ:

Պառավ իպե խարիսեն կերավ, թաս լվա̈ց, իրիշկաց՝ թասն ուր չէր:

Էլա̈վ կնա̈ց մեչ ճժերաց. կանչեց. - Ծա՛տրշուման, Ծա՛տրշուման, արե՛:

Ասաց. - Մ՛եռնեմ քյե, էրեկ ես էկա խարիսա տսրա. քյո ուսթեն իմ թաս փոխեր ի: Տյու կանա՞ս իմ թաս պիրե, մեկ փեշ ճիլին քյե գյիզ կուտամ:

Ասաց. - Էսա կիշեր կպիրեմ քյո թաս: Քյէլի էրթանքյ, քիչմ լից իմ ծոց:

Տարավ գյիզ հլից Ծատրշումանի ծոց, կոտոտելեն. ուտելեն կնաց: Ծատրշուման ի կնաց ուսթի տուն: Սարրաստ կնաց մտավ տուն, ուսթի կնիկ տեսավ:

Ասաց. - Խեղտա՛ծ, ինչի՞ չես էրթա մոտ ուսթին:

Ծատրշուման գյաղտիկ ինքյ ուր մեչտան պախեց, դոր աչկ կան՝ կուտա, թաս չկանա տեսնե:

Իրիշկաց՝ յիրիկուն ուսթեն էկավ: Իրիյ, կնիկ նստան գյեռ խաց կուտեն: Թաս կնիկ ուր ծոցեն խանեց տյուս: Գյեռ ճյուր կխմեն էնտով, էն էլ գյաղտիյ կիրիշկի:

Ասաց. - Կնի՛կ, ես էսօր շատ եմ նեղացե. թաս պռնի քյո ծեռ. ես մեյ կտոր քյնեմ. դե որ ես կպռնեմ իմ ծեռ, տյու կքյնես:

Խարիսա ծախող քյնավ, կնիյն էլ թաս պռնե ծեռ, ճա՛ կկքյա. ճա՛ կինի վեր ուրուրոցին:

Ծատրշուման կնաց մոտ կնիկ, թաս ծեռնեն առեց, ասաց. - Տու՛ ծի, տնավեր, ես եմ պանե. տյու ես նեղացե: Կնիկ քյնավ, ինգյավ վեր իրկան, վեր թռավ էլավ վեր:

Ասաց. - Կնիկ. յու՞ր է թաս:

Ասաց. - Թե տվի քյե:

Ասաց. - Վո՛ւ, Քյրիստոս, շան որթին էկե. թաս տարե:

Էն էլավ ուրիշ ճամխով, յազմեմ էթալ վեր գյլխուն. կնաց քյեռշեմ նստավ: Իրիշկաց. որ Ծատրշուման գյեռ ուր քյեֆով կուգյա:

Ասաց. - Հա՛յ, գրող քյե տանի, դե՛ տուր ծի իմ թաս:

Ասաց. - Առա, տարա խեղճ պառավ:

Քիչմ տեղ Ծատրշուման էկավ, իրիշկաց պառավ գյեռ նստե դա, կուլա:

Ասաց. - Պառա՛վ, ինչի՞ կուլաս, ես քյո թաս տվի, է՛:

Ասաց. - Չէ՛, որթի, չես տվե զիկ:

Ասաց. - Էն խերաքյան էկե զի խաբե, տարե:

Վալա Ծատրշուման քյանգյ խարիսա ծախող շուտ մտավ տուն. կնգյան լաչիկ առեց, թալեց ուր գյլեոխ, ուրուրոց գյրկեց. տղին իպե, իտի իրեսպանց. տղի կող մե խա կճմտեց, իրիշկաց խարիսա ծախող էկավ:

Ասաց. - Կնի՛կ, տյու էտա ուրուրոց ինչի՞ ես պիրե տյուս:

Ասաց. - Գյրեող տնեմ վեր Ծատրշումանին: Քյա մարթ. թաս պիրի՞ր:

Ասաց. - Պիրի՛, ապա կթողնեմ ինո՞ր:

Ասաց. - Դե՛ տուր զիկ, տու մո զիկ, տղեն գյրկի, առ էրթանքյ:

Ծատրշուման վազեվազ կնաց էլավ վեր էրդսին: Էն գյեռ տղեն մութ ինե առե կէրթա մեչ տան: Կնաց, ինկյավ վեր կնգյան:

Ասաց. - Մա՛րթ, տյու կո՞ր էր ինկյար վեր զի:

Ասաց. - Տո՛. քյո խեր գյեռռքացյեռո էլնի, յու՞ր է թաս:

Ասաց. - Տո՛ կնիկ, թե՞ տյու տղեն պիրեր էր իրեսպանց, ես թաս տվիցի քյե:

Ասաց. - Վո՛յ, Քյրիստոս, էլմ Ծատրշուման թաս տարավ:

Թասն իպե իտուր պառվուն:

Ասաց. - Պառա՛վ, ա՛ռ քյու թաս: